10102457

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

0010, Երևան, Վ. Սարգսյան 3/8, հեռ. 594004
Էլ. փոստ info@moj.am

22.11.2016թ. N 01/15162-16

Ձեր N ____________

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ԱՐԹՈՒՐ ՋԱՎԱԴՅԱՆԻՆ

**Հարգելի պարոն Ջավադյան**

Ի պատասխան Ձեր 2016 թվականի նոյեմբերի 18-ի 15.1-06/000868-16 գրության՝ կից ներկայացվում է ««Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի լրամշակված նախագծի առնչությամբ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պետական փորձագիտական եզրակացությունը, ինչպես նաև հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ եզրակացությունը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆ
СЕКРЕТАРИАТ

ԱՐՓԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Կատարող՝ Եվա Սաղոյան
ՀՀ ԱՆ իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Հեռ. (010) 59-41-30

Արդարադատության
Նախարարություն

# ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**««Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի լրամշակված նախագծի վերաբերյալ**

««Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի լրամշակված նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

**Իրավական ակտերի փորձաքննության գործակալության պետ՝** **Կ. ԽՏՐՅԱՆ**

## ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

## ««Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի լրամշակված նախագծի վերաբերյալ

««Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի լրամշակված նախագծի 4-րդ հոդվածով սահմանվում են պարգևատրումների և խրախուսական այլ վճարումների վճարման սահմանափակման հիմքերը: Այսպես, նշված հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Կենտրոնական բանկը պարգևատրումների և խրախուսական այլ վճարումների վճարումը, ի թիվս հոդվածում թվարկված այլ հիմքերի, կարող է սահմանափակել նաև Կենտրոնական բանկի կողմից օրենքով սահմանված կարգով տրված հանձնարարականը բանկի կողմից չկատարելու դեպքում: Այս կապակցությամբ գտնում ենք, որ նշված հիմքի նախատեսումը խնդրահարույց է՝ հետևյալ հիմնավորմամբ. «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի համաձայն՝ Կենտրոնական բանկի կողմից օրենքով սահմանված կարգով տրված հանձնարարականը չկատարելը *բանկի* նկատմամբ պատժամիջոցներ կիրառելու հիմք է: Նույն օրենքի 64-րդ հոդվածի համաձայն՝ Կենտրոնական բանկի հանձնարարականը չկատարելը *բանկի ղեկավարներին* որակավորման վկայականից զրկելու հիմք է:

Վերոնշյալ դրույթների վերլուծությունից բխում է, որ Կենտրոնական բանկի՝ օրենքով սահմանված կարգով տրված հանձնարարականը չկատարելը կարող է հանգեցնել ոչ թե անմիջականորեն բանկի աշխատակիցների, այլ բանկի և բանկի ղեկավարների նկատմամբ պատժամիջոցների կիրառման, ուստի բանկի կողմից համապատասխան հանձնարարականը չկատարելու բացասական հետևանքները

չպետք է անդրադառնան բանկի աշխատակիցների իրավունքների, այդ թվում՝ պարգևատրումներ և խրախուսական այլ վճարներ ստանալու իրավունքի վրա: Բացի այդ, անհասկանալի է՝ ինչու է հանձնարարականը չկատարելը նախատեսվում որպես պարգևատրումների և խրախուսական այլ վճարումների վճարման սահմանափակման հիմք և չի նախատեսվում որպես շահութաբաժինների բաշխման սահմանափակման հիմք՝ համաձայն նախագծի 3-րդ հոդվածի:

**Իրավական ակտերի փորձաքննության գործակալության պետ՝** **Կ. ԽՏՐՅԱՆ**